ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Սամվել Զալիբեկի Կրոյանի « Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատումը՝ հողերի անթրոպոգեն փոփոխությունների ուսումնասիրությունների արդյունքներով» թեմայով դոկտորական ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացվել է Ե 23.06 «Գեոդեզիա ներառյալ քարտեզագրություն և կադաստր» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության **թեմայի արդիականությունը** կասկած չի հարուցում, քանի որ այն առնչվում է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդրի՝ հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման, պահպանման և գնահատման հետ: Աշխատանքում ներկայացված է, որ հանրապետության հողային ֆոնդը սահմանափակ է, մինչդեռ անթրոպոգեն ազդեցությունների հետևանքով հողերի դեգրադացիան շարունակում է խորանալ, ինչը դարձնում է կադաստրային գնահատման կատարելագործման անհրաժեշտությունը առաջնահերթ խնդիր:

Ատենախոսության **նպատակն** է իրականացնել գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատում՝ հիմնվելով դրանց հատկությունների անթրոպոգեն փոփոխությունների համակողմանի վերլուծության վրա: Նպատակի իրականացման համար առաջադրված են հստակ խնդիրներ՝ ներառյալ **հողերի դասակարգման կատարելագործումը, անթրոպոգեն ազդեցությունների գնահատումը, կադաստրային և շուկայական արժեքների համեմատական վերլուծությունը և գնահատման մեթոդների զարգացումը:**

Ատենախոսության **մեթոդաբանական հիմքը** գիտականորեն լավ մշակված է. Այն հիմնված է կադաստրային գնահատման գործընթացում շուկայական արժեքի կիրառման վրա՝ որպես համընդհանուր և համադրելի ցուցանիշ: Այս մոտեցումը թույլ է տալիս գնահատման արդյունքները մոտեցնել իրական տնտեսական պայմաններին և կիրառվում է նաև Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հողերի գնահատման համակարգում: Հաշվի է առնվում, որ գնահատման տվյալները փոփոխվում են մարդածին, տնտեսական և այլ գործոնների ազդեցությամբ, ինչի հետևանքով կադաստրային արժեքը կարող է հետ մնալ շուկայականից: Այդ պատճառով նախատեսվում է գնահատման պարբերական վերանայում՝ մոտավորապես յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ ապահովելու արդիականություն և կառավարման արդյունավետություն:

Գնահատման մեթոդները հարմարեցված են Հայաստանի բնական և տնտեսական պայմաններին և հիմնված են իրավական կարգավորումների վրա: Հիմքում դրված է հաշվարկային մաքուր եկամտի մոտեցումը, որն իրականացվում է կադաստրային շրջանայնացման և հողերի խմբավորման հիման վրա՝ ապահովելով տնտեսական և որակական ցուցանիշների համապատասխանություն:

Մեթոդաբանությունը ներառում է նաև միջազգային փորձի համադրություն, որտեղ լայնորեն կիրառվում է շուկայական արժեքի վրա հիմնված մոտեցումը՝ բարձրացնելով գնահատման ճշգրտությունն ու արդյունավետությունը:

Ատենախոսության **գիտական նորույթը** պայմանավորված է մի շարք կարևոր արդյունքներով, որոնցից կարելի է առանձնացնել՝

- Հանրապետության հողատեսքերի դասակարգման և անվանաման նոր մոտեցումներ՝ համաձայն միջազգային WRB համակարգի:
- Անթրոպոգեն գործոններով պայմանավորված հողի հիմնական հատկությունների փոփոխության ուղղությունները:
- Գյուղատնտեսական հողերի դասակարգման բարելավված մեթոդներ:
- Հայաստանի Հանրապետության հողային կադաստրային գոտիավորման նոր քարտեզ սխեմա:
- Հողի որակական գնահատման՝ բոնիտիրովկա, արդյունքներ:
- Շուկայական և կադաստրային հողերի արժեքների համեմատական տվյալներ:

Ատենախոսության **գործնական նշանակությունը** ակնհայտ է: Ստացված արդյունքները կարող են կիրառվել պետական կառավարման համակարգում՝ հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, հարկման քաղաքականության բարելավման, ինչպես նաև տարածքային զարգացման ծրագրերի մշակման գործընթացներում:

Աշխատանքը **կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ** և ընդգրկում է ներածություն, հինգ գլուխ, եզրակացություններ և առաջարկություններ, գրականության ցանկ և հավելվածներ: Աշխատանքում ներկայացված են բազմաթիվ քարտեզներ, աղյուսակներ և վերլուծական նյութեր, որոնք բարձրացնում են հետազոտության գիտական արժեքը: **Առաջին գլխում** կատարված է հողի ուսումնասիրվածության աստիճանի համակողմանի վերլուծություն, ներկայացված են ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան գիտական աշխատանքների վերլուծություն: **Երկրորդ գլխում** քննարկվում են հողերի դասակարգման հարցերը՝ միջազգային WRB համակարգի համադրմամբ: **Երրորդ գլխում** մանրամասն ներկայացված է անթրոպոգեն գործոնների ազդեցությունը հողերի վրա:

Չորրորդ և հինգերորդ գլուխներում ներկայացված են կադաստրային շրջանացման, խմբավորման և գնահատման մեթոդները և դրանց կիրառման արդյունքները:
Ատենախոսությունը աչքի է ընկնում իրականացման գիտական բարձր մակարդակով, տեսական և կիրառական բաղադրիչների համադրությամբ, ինչպես նաև լայնածավալ փաստական նյութի ներգրավմամբ: Հեղինակը ցուցադրել է թեմայի խոր իմացություն և ժամանակակից մոտեցումների կիրառման կարողություն:
Բարձր գնահատելով կատարված աշխատանքը, միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել մի շարք դիտարկումներ և դիտողություններ՝
Բովանդակային բնույթի դիտարկումներ և դիտողություններ

1. Ներածության մեջ նպատակն ու խնդիրները ներկայացված են հստակ, սակայն հետազոտության տեսական հիմնավորումը կարելի էր առավել ընդլայնել՝ ընդգրկելով հողագիտության և կադաստրային գնահատման ժամանակակից տեսական մոդելների համադրություն:
2. Որոշ բաժիններում (հատկապես դասակարգման և միջազգային փորձի ներկայացման ժամանակ) նկատվում է նկարագրական մոտեցման գերակշռում՝ առանց բավարար վերլուծական համադրության:
3. Կադաստրային և շուկայական արժեքների համեմատական վերլուծությունը ներկայացված է, սակայն դրա արդյունքների տնտեսական մեկնաբանությունը կարող էր ավելի խորացված լինել: Մյուս կողմից *«Շուկայական արժեք» և «շուկայական գին»* առանցքային եզրույթներն օգտագործվում են տարբեր հատվածներում՝ առանց հստակ տարբերակման, մինչդեռ գնահատման տեսությունում դրանք ունեն որոշակի տարբեր իմաստներ:

Տեխնիկական բնույթի դիտողություններ

4. Ներկայացված քարտեզների ձևավորման մեջ առկա են որոշակի թերացումներ, մասնավորապես. ա/Քարտեզների մասշտաբների և ընդհանրացման մակարդակի ոչ հստակեցում, բ/Քարտեզագրական պրոյեկցիայի և կոորդինատային համակարգի բացակայություն կամ ոչ լիարժեք ներկայացում և գ/Լեգենդների և պայմանանշանների ոչ բավարար մշակվածություն: Մեր կարծիքով այս բացթողումների լրացումները կարող էին էականորեն բարձրացնել քարտեզների հետագա գործնական օգտագործման նշանակությունը:
5. Աշխատանքի որոշ հատվածներում հանդիպում են լեզվական և խմբագրական անհարթություններ, ինչպես նաև եզրույթների ոչ ամբողջությամբ միատեսակ

կիրառություն, օրինակ՝ «*Կադաստրային գնահատում*» և «*կադաստրային արժեքի որոշում*» -ը. որոշ հատվածներում կիրառվում է որպես գործընթաց («գնահատում»), իսկ այլ տեղերում՝ որպես արդյունք («արժեքի որոշում»), առանց հստակ տարանջատման կամ «*Գյուղատնտեսական նշանակության հողեր*» և «*գյուղատնտեսական հողեր*», օգտագործվում են փոխարինաբար, սակայն գիտական աշխատանքում ցանկալի է պահպանել մեկ միասնական ձևակերպում:

6. **Աղյուսակների և նկարների ձևավորման մեջ տեղ-տեղ նկատվում են անհամապատասխանություններ** (հղումների և համարակալման մեջ), ինչը կարող է դժվարացնել նյութի ընկալումը, օրինակ «Աղյուսակ 5.1»-ում ներկայացված տվյալների կառուցվածքը ամբողջությամբ համահունչ չէ վերնագրին. այունակների վերնագրերը և միավորները (սմ, բալ) տեղադրված են խառն ձևով, իսկ հայերեն և ռուսերեն նշումները («Тип почвы», «Наименование») կիրառված են միևնույն աղյուսակում՝ առանց միասնական ձևաչափի: Որոշ դեպքերում աղյուսակների կամ տվյալների ներկայացումը չի ուղեկցվում հստակ հղումով («տես աղյուսակ ...»), կամ հղումը չի համապատասխանում ներկայացված նյութին, ինչի պատճառով ընթերցողը դժվարությամբ է գտնում համապատասխան տեղեկատվությունը:

Նշված դիտողությունները հիմնականում կրում են կատարված աշխատանքի բարելավման բնույթ և չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր բարձր գիտական արժեքը:

Եզրակացություն

Ամփոփելով դոկտորական ատենախոսության բովանդակությունը հանգում ենք հետևյալ եզրակացության: Աշխատանքում ներկայացված տվյալները հաստատվել են կատարված գիտական հետազոտությունների արդյունքում, իսկ առաջարկվող միջոցառումների կիրառումը հնարավորություն կտա լուծել ՀՀ տարածքի հողակադաստրային շրջանացման և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատմանը վերաբերող հարցերը:

Սամվել Զալիբեկի Կրոյանի ատենախոսությունը հանդիսանում է ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք, որն ունի տեսական և կիրառական նշանակություն: Աշխատանքը համապատասխանում ՀՀ ԲՈԿ-ի դոկտորական ատենախոսություններին ներկայացվող 8-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը արժանի է՝ Ե 23.06 մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սայադյան Հովիկ Յախշիբեկի

Սայադյան Հովիկ Յախշիբեկի ստորագրության իսկությունը
հաստատում եմ.

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության
ինստիտուտի գիտքարտուղար,
կ.գ.թ. Ա. Լ.Աչոյան

(կազմակերպության գիտ. քարտուղար)
ստորագրություն և կնիք)

(